ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ III, № 5, 1950 Биол. и сельхоз. науки

Հ. Ա. Նալբանդյան

ՇՎԱՏՄԱՆ ԷՖԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂՈՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԱՃԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Խաղողի վազի շվատումը՝ էլը լրացնող ագրոտեխնիկական միջոցառում է, որի հիմնական նպատակն է, կանոնավորելով վազի աննդառության ռեժիմը, բարձրացնել բերքատվությունը, ապահովել շիվերի աճեցողությունն ու հաջորդ տարվա բերքատու աչքերի կազմակերպումը, հետաղա տարիների էտն ու ձևավորումը։ Շվատման միջոցով հնարավորություն է ստեղծվում նաև, որ վազերի մեջ լիարատ թափանցեն օդ և լույս, որը նվազեցնում է սնկային հիվանդությունների և վնասատուների տարածման նպաստող պայմանները և միաժամանակ դյուրացնում է այդում կատարվող աշխատանքները։

Չնայած որոշ հեղինակների՝ կանաչ հատումների վերաբերյալ կատարած ուսումնասիրություններին [1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9], այդ հարցը դեռևս լրիվ կերպով չի կարելի համարել լուծված։

Հատկապես Հայաստանի պայմաններում չի որոշված խաղողի վազի շվատումների կատարման ժամկետները և շվատումների քանակը։

Այդ նպատակով մեր կողմից 1947—1948 թ. թ. ընթացքում փորձեր դրվեցին պարզելու շվատման ժամկետները և շվատումների քանակը, վարդագույն Երևանի և Թավրիզենի սորտերի մոտ։

Փորձերը դրվել են Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գինեգործության և Խաղողագործության Ինստիտուտի 2-րդ ագրոհողամասում 3 կրկնությամբ, հետևյալ սխեմայով.

1-ին վարիանտ—շվատում 3 ժամկետով ա) ծաղկափթթությունները մասսայաբար ակնհայտ երևալու ժամանակ.

բ) ծաղկման սկզբին.

գ) պտղալիցի սկզբնական շրջանում.

2-րդ վարիանտ—շվատում 2 ժամկետով ա) ծաղկման սկզբին.

բ) պտղալիցի սկզբնական շրջանում.

3-րդ վարիանտ (կոնտրոլ) շվատում 1 ժամկետով—պտղալիցի սկզբնական շրջանում։

Փորձնական այգիներն ունեցել են 1,5×1,25 խտություն։ Վազերը բարձրացված են լարերի վրա։

Վարդագույն Երևանի սորտից փորձի տակ վերցված են 45 վազ, Թավրիզենի սորտից՝ 120 վազ։

Վազի տարբեր փուլերի ընթացքի վրա զանազան ժամկետներում կատարած շվատումների ազդեցությունը պարզելու համար 1947—1948 թ. թ. կատարվել են ֆենոլոգիաներ, որի տվյալները բերում ենք սորտերի № 1 աղյուսակում։

Աղյուսակ 1

Ֆենոլոգիական դիտողություններ

Վարիանտներ	Դիտողության տարեթիվ	Վարդագույն երևանի				Թավրիզենի			
		Ծաղկման սկիզբ	Հասունացում			Ծաղկման սկիզբ	Հասունացում		
			Սկիզբ	Ֆիզիոլ.	Բերքահավաք		Սկիզբ	Ֆիզիոլ.	Բերքահավաք
1. Շվատում 3 ժամկետով՝	1947	25/5	22/7	16/8	13/9	21/5	2/8	20/8	26/9
ա) Ծաղկափթթություններ մասսայաբար, ակնհայտ երևալու ժամանակ	1948	5/6	2/8	21/8	25/9	2/6	7/8	28/8	30/9
բ) Ծաղկման սկզբին . .									
գ) Պոպալիցի սկզբնական շրջանում									
2. Շվատում 2 ժամկետով՝	1947	27/5	26/7	20/8	13/9	22/5	4/8	23/8	26/9
ա) Ծաղկման սկզբին . .	1948	7/6	4/8	24/8	25/9	2/6	7/8	28/8	30/9
բ) Պոպալիցի սկզբնական շրջանում									
3. Շվատում 1 ժամկետով՝	1947	27/5	31/7	26/8	13/9	24/5	9/8	27/8	26/9
Պոպալիցի սկզբնական շրջանում (կոնտրոլ) .	1948	7/6	6/8	26/8	25/9	2/6	9/8	1/9	30/9

Աղյուսակի տվյալներից երևում է, որ Վարդագույն Երևանի և Թավրիզենի սորտերի այն վաղերը, որոնք շվատել ենք 3 անգամ և վաղ ժամկետներում, ապա նրանց ծաղկման սկիզբը 2—3 օրով, բերքի հասունացման սկիզբը 6—7 օրով և ֆիզիոլոգիական հասունացումը 7—8 օրով շուտ է տեղի ունեցել, քան այն վաղերի մոտ, որոնք շվատվել են մեկ անգամ՝ ուշ ժամկետում։

Նպատակ ունենալով պարզելու շվատման ազդեցությունը վաղի ամեցողության վրա, փորձերի տակ վերցված վաղերի մոտ հաշվի է առնված հեռացված շիվերի քաշը։

Հաշվառումները ցույց տվեցին, որ վաղ ժամկետներում շվատած կանաչ մասսայի քաշը ցածր է եղել, քան ուշ ժամկետում՝ այսինքն շվատած մասսայի քաշը պոպալիցի սկզբնական շրջանում։ Այդ բացատրվում է նրանով, որ որքան ուշ է կատարվում շվատումը, այնքան հեռացվող շիվերը մեծ են լինում, որի հետևանքով էլ մեծանում է հեռացվող կանաչ մասսայի կշիռը (տես. աղյուսակ № 2)։

Թավրիզենի սորտի մոտ փորձի տակ վերցրած վաղերի վրա շվատում կատարվել է նաև ավելի ուշ ժամկետում (4-րդ անգամ), այն է՝ պտուղների հասունացման սկզբնական շրջանում։ Փորձերի երկու տարվա դիտողությունները ցույց տվեցին, որ երեք ժամկետներում կատարած շվատումներից հետո, չորրորդ ժամկետում շվատման համար հեռացվող շիվեր համարյա թե չեն մնում, ուստի և այդ ժամկետում շվատումը համարում ենք ավելորդ։

Աղյուսակ 2

Մեկ վագից շվատած կանաչ մասսայի քաշը գրամներով

Վարիանտ	Տարեթիվը	Վարդագույն Երևանի		Թավրիզենի	
		Շվատման ժամկետները	Քաշը գ-ով	Շվատման ժամկետները	Քաշը գ-ով
1. Շվատում 3 ժամկետով՝ . .	1947	8/5 24/5 23/7	295	5/6 21/5 16/7	347
ա) Ծաղկափթթությունները մոտավորապես սկսնական երևալու ժամանակ	1948	29/5 5/6 22/7	661	22/5 5/6 22/7	817
բ) Ծաղկման սկզբին					
գ) պտղալիցքի սկզբնական շրջանում					
2. Շվատում 2 ժամկետով՝ . .	1947	24/5 23/7	389	21/5 16/7	508
ա) Ծաղկման սկզբին	1948	5/6 22/7	807	5/6 22/7	1063
բ) պտղալիցքի սկզբնական շրջանում					
3. Շվատում 1 ժամկետով՝ . .	1947	23/7	404	16/7	567
Վագալից սկզբնական շրջանում (կոնարով)	1948	22/8	698	22/7	865

Շվատումների ազդեցությունը վագերի ընդհանուր աճեցողության վրա պարզելու նպատակով կատարել ենք վագերի տարեկան աճեցողության հաշվառում երկու ձևով.

1. Վեգետացիայի վերջում վագերի վրա եղած բոլոր շվերի երկարության և հաստության չափման միջոցով. 2. Էտված մասսայի կշռման միջոցով։ Ստացված տվյալները բերում ենք ստորև՝ № 5 աղյուսակում։

Աղյուսակից երևում է, որ վաղ ժամկետներում 3 անգամ կատարած շվատումները վագի տարեկան աճեցողության վրա թողել են օրինաչափորեն դրական ազդեցություն։ Այսպես՝ Վարդագույն Երևանի սորտի մոտ երեք անգամ շվատելու դեպքում (առաջին վարիանտ), մեկ վագի տարեկան միջին աճեցողությունը մեկ անգամ—ուշ ժամկետում շվատած (3-րդ վարիանտ) վագի աճից բարձր է՝

1947 թ. քաշով 76,8%-ով ծավալով 42,4%-ով
1948 թ. » 105,8%-ով » 29,1%-ով

Թավրիզենի սորտի մոտ համապատասխանաբերեն՝

1947 թ. քաշով 16%-ով ծավալով 50,9%-ով
1948 թ. » 28,6%-ով » 22,0%-ով

Տարբեր ժամկետներում և տարբեր քանակով կատարած շվատումների ազդեցությունը բերքի քանակի վրա պարզելու նպատակով կատարված է բերքատվության կոեֆիցիենտի և բերքի քանակի հաշվառում, որոնց արդյունքներն ըստ առանձին սորտերի և առանձին վարիանտների բերում ենք ստորև № 4 աղյուսակում։

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ Վարդագույն Երևանի և Թավրիզենի սորտերի մոտ վաղ ժամկետներում երեք անգամ շվատած վա-

Աղյուսակ 3

Վագերի տարեկան աճեցողությունը

Վարիանտ	Տարիքին	Վարդագույն երևանի		Թավրիզենի	
		Տարեկան աճեցողությ. խամ-ով	Լրված մասամբի քաշը կգ-ով	Տարեկան աճեցողությ. խամ-ով	Լրված մասամբի քաշը կգ-ով
1. Շվատում 3 ժամկետով՝ . .	1947	446	1680	907	3110
ա) Ծաղկափթթությունները մասսայաբար ակնհայտ երևալու ժամանակ	1948	545	700	741	1030
բ) Ծաղկման սկզբին . . .					
գ) պտղալիցի սկզբ. շրջանում					
2. Շվատում 2 ժամկետով՝ . .	1947	333	1030	972	3010
ա) Ծաղկման սկզբին . . .	1948	441	450	945	900
բ) պտղալիցի սկզբ. շրջանում .					
3. Շվատում 1. ժամկետով՝ . .	1947	313	950	601	2680
Պտղալիցի սկզբնական շրջանում (կոնտրոլ)	1948	422	340	607	800

Աղյուսակ 4

Բերքատվությունը շվատման տարբեր վարիանտներում (2 տարվա միջինը)

Վարիանտ	Վարդագույն երևանի			Թավրիզենի		
	Բերքատվության կոեֆիցիենտ	Մեկ վագի միջին բերքը կգ-ով	Մեկ հեկտ. միջին բերքը տոնաներով	Բերքատվության կոեֆիցիենտ	Մեկ վագի միջին բերքը կգ-ով	Մեկ հեկտ. միջին բերքը տոնաներով
1. Շվատում 3 ժամկետով						
ա) Ծաղկափթթությունները մասսայաբար ակնհայտ երևալու ժամանակ . .	0,38	1,4	77,5	0,52	2,4	128,7
բ) Ծաղկման սկզբին . . .						
գ) պտղալիցի սկզբնական շրջանում						
2. Շվատում 2 ժամկետով .						
ա) Ծաղկման սկզբին . . .	0,28	1,1	58,7	0,44	1,9	101,5
բ) պտղալիցի սկզբնական շրջանում						
3. Շվատում 1 ժամկետով՝ պտղալիցի սկզբնական շրջանում (կոնտրոլ)	0,27	0,9	50,7	0,34	1,6	88,1

գերն ունեն բերքատվության ավելի բարձր կոեֆիցիենտ, քան այն վազերը, որոնք շվատվել են մեկ անգամ՝ ուշ ժամկետում։

Նույն օրինաչափությունը երևում է նաև բերքատվության նկատմամբ. այսպես՝ վաղ ժամկետներում շվատված վազերի բերքը մեկ հեկտարի հաշվով՝ Վարդագույն Երևանի սորտի մոտ 26,8 ցենտներով, Թավրիզենի սորտի մոտ 40,6 ցենտ. բարձր է ուշ ժամկետում շվատված վազերի բերքից։

Եվատումների ազդեցությունը Վարդագույն Երևանի և Թավրիզենի սորտերի բերքի որակի վրա պարզելու նպատակով կատարվել են խաղողի մեխանիկական և քիմիական անալիզներ։ Կազմակերպվել է խաղողի դեգուստացիա։

Մեխանիկական և քիմիական անալիզների արդյունքները բերում ենք սորտի № 5 աղյուսակում։

Աղյուսակ 5

Եվատված վազերի բերքի մեխանիկական և քիմիական անալիզը
(2 տարվա միջինը)

Վարիանտ	Վարդագույն Երևանի			Թավրիզենի		
	Մեկ ողկույզի գանգվածը գրամ-ով	Հատապտուղների գանգվածը գրամ-ով	Թթվայնությունը %	Մեկ ողկույզի գանգվածը գրամ-ով	Հատապտուղների գանգվածը գրամ-ով	Թթվայնությունը %
1. Եվատում 3 ժամկետով՝	172,5	25,5	5,30	239	23,1	3,33
ա) ծաղկափթթությունները մաստաչարաբար ակնհայտ երևալու ժամանակ						
բ) ծաղկման սկզբին						
գ) պտղալիցի սկզբնական շրջանում						
2. Եվատում 2 ժամկետով՝	163,5	25,4	5,50	235	22,5	3,45
ա) ծաղկման սկզբին						
բ) պտղալիցի սկզբնական շրջանում						
3. Եվատում 1 ժամկետով՝ պտղալիցի սկզբնական շրջանում (կոնտրոլ)	146,5	25,0	5,88	227	22,3	4,12

Աղյուսակի տվյալներից երևում է, որ վաղ ժամկետներում կատարած շվատումները դրական կերպով են ազդել Վարդագույն Երևանի և Թավրիզենի սորտերի ողկույզների մեծության վրա։

Բերքի որակին առանձնապես խիստ փոփոխություն չի ենթարկվել։

Առաջին վարիանտում վազերի խաղողաշության շաքարի տոկոսը համեմատած վերջին վարիանտի հետ բարձր է եղել՝ Վարդագույն Երևանի սորտի մոտ 0,5%-ով, իսկ Թավրիզենի սորտի մոտ 0,8%-ով։

Թթվությունը պակաս է համապատասխանորեն՝ Վարդագույն Երևանի սորտի մոտ 0,58%-ով, Թավրիզենի սորտի մոտ 0,79%-ով։

Գինեգործության Ինստիտուտին կից կազմված դեգուստացիոն հատուկ հանձնաժողովի կարծիքը փոքր տակ դանված Վարդագույն Երևանի և Թավրիզենի սորտերի խաղողի վերաբերյալ հետևյալն է. հիշված երկու սորտերի մոտ վաղ ժամկետներում շվատած վազերի մոտ սորտին հատուկ

պաղի դույնը ավելի վառ է արտահայտված, ոգեղյուղի խտությունը նորմալ է, իսկ պտուղներն իրենց մեծությամբ և քաղցրությամբ գերազանցում են ուշ ժամկետում շվատած վազերի (կոնարոլ) խաղողի նույն հատկություններին։

Մեկ անգամ ուշ ժամկետում շվատած վազերի խաղողը համեմատած մյուս վարիանտների հետ ունի բարձր թթվություն։

Այս բոլորը բացատրվում է նրանով, որ վաղ ժամկետներում կատարած շվատումների միջոցով կանխվում է սննդանյութերի ավելորդ ծախսը՝ վազի վրա առաջացող ոչ բերքատու և ձևավորման համար ոչ պիտանի շվերի սնման համար, և այդ խնայված սննդանյութերը տրամադրվում են վազի մնացած մասերին, որի հետևանքով բարձրանում է վազի աճեցողությունն ու բերքատվությունը, ապահովելով բերքի արակը։

Նկատի ունենալով, որ փորձնական վազերի տնկման խտությունը տարբերվում էր արտադրության մեջ ընդունված ստանդարտ (2,5×1,5) տնկման խտությունից, նույն փորձը 1948 թ. կրկնվեց Թավրիզենի սորտի վրա, տնկված նորմալին մոտիկ խտությամբ (2,0×1,5) և առապարային (զրո) հողերի պայմաններում։

Փորձի արդյունքները ցույց տվեցին, որ վաղ ժամկետներում կատարված շվատումները նաև ստանդարտին մոտ խտությամբ տնկվածքի դեպքում, անգամ զոնի պայմաններում, նույնպես տալիս են դրական արդյունքներ, որի ամփոփված տվյալները բերում ենք № 6 աղյուսակում։

Աղյուսակ 6

Շվատումների ազդեցությունը վազի աճեցողության և բերքատվության վրա առապարային հողերի պայմաններում

Վարիանտ	Մեկ վազի տարեկան աճեցողությունը		Մեկ հեկտ. բերքատվությունը ցենտ-ով	Խաղողի որակը	
	Աճման մասսան գրամ-ով	Լուծածքի քաշը գրամ-ով		Քաղցրության %	Թթվության %
1. Շվատում 3 ժամկետով՝	251	600	47	25,0	3,00
ա) Ծաղկափթթությունները մասսայաբար ակնհայտ երևալու ժամանակ					
բ) Ծաղկման սկզբին					
գ) պտղալիցի սկզբնական շրջանում					
2. Շվատում երկու ժամկետով	197	475	37	24,0	3,00
ա) Ծաղկման սկզբին					
բ) պտղալիցի սկզբնական շրջանում					
3. Շվատում մեկ ժամկետով՝	164	115	33	23,6	3,37
պտղալիցի սկզբնական շրջանում (կոնարոլ)					

Վերև բերված տվյալների հիման վրա կարելի է դալ հետևյալ եզրակացության. Վարդագույն Երևանի և Թավրիզենի սորտերի մոտ երեք անգամ՝ ա) ծաղկափթթությունները մասսայական ակնհայտ երևալու ժամանակ, բ) ծաղկման սկզբին, գ) պտղալիցի սկզբնական շրջանում կատարած շվատումները արագացնում են ծաղկման սկիզբը 2—3 օրով, հասունացման սկիզբը 6—7 օրով և ֆիզիոլոգիական հասունացումը 7—8 օրով։

Ավելանում է վազի տարեկան աճեցողությունը և բերքի քանակը, քսա որում պահպանվում է սորտին հատուկ որակը։

Հայկական ՍՍՌ Դիտությունների Ակադեմիայի
Գինեգործության և Խաղողագործության Ինստիտուտ։

Ստացվել է
25 IV 1950

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Ա. Մերժանյան—Այգեգործություն. Երևան, 1928։
2. *Н. Бузин Я. Принц* и др.—Виноградарство. Москва, Ленинград, 1937.
3. *Т. Н. Тогаль-Яновский*—Руководство по виноградарству. Москва—Ленинград, 1928
4. *Мержанян* и *Болгарев*—Начальные основы виноградарства. Москва, 1937.
5. *Г. Фоекс*—Полный курс виноградарства. С-Петербург, 1904.
6. *А. А. Кипен*—Основы рационального виноградарства в Средней Бессарабии. С-Петербург 1908.
7. *П. П. Благокравов*—Формирование и подрезка виноградной лозы. Москва, 1947.
8. *Н. Е. Цабельин*—Руководство по виноградарству. Одесса, 1873.
9. *А. Л. Кипен*—Вестник Виноделия. Обрезка винограда. Одесса, 6, 1910.

А. А. Налбандян

Эффективность обломки на рост и повышение урожайности культуры винограда

Резюме

Результаты опытов по обломке зеленых побегов виноградной лозы у сортов Еревани розовый и Тавризени показали следующее:

Обломка зеленых побегов у сорта Еревани розовый и Тавризени, проведенная в 3 срока: а) в период массового появления соцветий; б) в начале цветения; в) в первоначальном периоде налива ягод, ускоряет начало цветения от 2—3 дней, начало созревания 6—7 дней и физиологическое созревание на 7—8 дней.

Увеличиваются урожай и средний прирост однолетних побегов, причем сохраняются и свойственные качества указанных сортов.